ՑԱՂԱԳՍ ԱՆԳԻՏԱՑ

Ցուտ խօսելոյ զբանս անպիտանս և հակառակ կալ իմաստնոց.

Ցրիաթ կանչեմ [1] հաղար 'ւ ահեղ հառաչ բերեմ լալով,
Ի յանգէտ մարդկան ձեռաց զՀոգիս երեմ անչէջ հրով։
Եմ յիմար դարձել ու խեւ ու սաւդայի [2] ի շուրջ գալով,
Եւ վասն էշ ու անյիմայ ոմանց հանեմ զՀոգիս շուտով։
Ես չունիմ հանգըստութիւն. ւ յերակ [3] խոցիմ անգէտ խօսով,
Ձերայ [4] չեն ցուցնել զբանըն պիտանի ու խորհրդով.
Զի սուրաթէ են թէ սիֆաթ [5], կան կենդանի ու չեն հոգով,
Եւ չունին աչեր մտաց եւ ոչ խօսին ի մարդ սիրով։
Ատեն զմարդն իմաստուն, յիմար կոչեն ու ծուռ ճանփով,
Ծածկել են ըզգործն աղէկ ու վատ անուն հանեն շուտով.
Եթէ սուրբ ւ առաքինի լինին ոմանք բոլոր սրտով՝
Են նոցա խիստ հակառակ ով է անսուրբ ու պեղծ գործով։
Աղէկին վատն է ատող, ւ ի հետ բարւոյն չարն է նենգով,
Եւ անգէտն ոչ կամենայ զմարդն իմաստուն որ կայ բարով.
Թէ խօսիս քաղցր եւ անուշ բան մի երկուս յինք խրատով
Նա հեռի փախի ի քէն եւ չընդունի ըզքեզ սիրով։
Զիմաստունն ով է յաղթել, թող թէ հընար բերեն չարով,
Կամ զուգեն բանք աղտեղի եւ բամբասեն սուտ խօսելով.
Նա ըլլս է եւ նա խաւար, որ չըկայ հնար մերձենալով,
Զի յիրմէն փախչի հեռի՝ ի խոր տեղիք բընակելով.
Խաւարին գործն՝ ի խաւարն է հաստատել՝ ծածուկ կալով.
Նա լուսոյն երբ երեւի՝ վախէ յայտնել զինք բանալով.
Եւ անգէտ խօսքն ի յանգէտ մարդիկն ի մօտ է զիմաթով [6].
Եւ չունի իշխանութիւն առ իմաստունս երեւելով։
Ով լինի իմաստնոյն ինք հակառակ՝ չար կամելով՝
Նայ հանց տես թէ լեալ Ցուդա, եւ զնա խաչէ չարչարելով.
Ով խօսի բանք աղտեղի դէմ ի յարդարըն կատիկով՝
Աստուծոյ է մեղանչել եւ կործանի նա մեծ չարով։

1 Բողոքեմ։
2 Սէկայի. Մաղձոտ։
3 Շուտով։
4 Վասն զի։
5 Երեսք, դրսի կերպարանք։
6 Ցարդի պատուական։

Իմաստունն է առաւօտ, աւետաւոր է ցնծալով,
Իսկ անմիտն ի խաւարի կայ թանձրացեալ յերազ քընով.
Իմաստունն արեգական պէս է պայծառ եւ լի լուսով,
Իսկ անմիտն է խաւարի տուն եւ տեղի, եւ լի ցաւով։
Իմաստունն է բուրաստանք ծաղկով լցած գոյնզգոյնով,
Ի անմիտին սիրտն է ի լի մութն ու մըլար սառնամանով.
Իմաստունն պտուղ բարի՝ անմահութեան ճաշակ տալով,
Իսկ անմիտն է անպըտուղ դատարկացեալ եւ լի փըշով։
Իմաստունն է յաշխարհէս ինք յազեցել անարգելով,
Իսկ անմիտն է ցանկութեամբ զինք բորբոքել սրտի սիրով.
Իմաստնոյն միտքն առատ խիստ լիութեամբ կուշտ եւ ուժով,
Ի անմիտն է քաղց ու ծարաւ, ակն է ագահ եւ լի սովով։
Իմաստունն է ճանապարհ ճշմարտութեան ինք գընալով,
Իսկ անմիտն է կոյր մըտոք՝ ի խորխորատ անգեալ ւ ի ծով.
Իմաստունն ոչ երկընչի թէ հարկանեն զինքըն սրրով,
Բայց յանգէտ մարդու խօսից խոցի հոգւով ու մարմընով։
Զի անգէտն եւ անըզգամն Աստուած չունի ինք գիտելով,
Որպէս տէրըն մեր Քրիստոս անարգեցաւ չարչարելով.
Ոչ ետես զանգէտն արժան՝ որ զինք յայտնէր ճանաչելով,
Այլ եթող ի խաւարի կոյր ւ անյիմայ մեռած հոգւով։
Յարեւնէն սուրբ Աբելի մինչեւ ցայսօր ձեզ նըշանով,
Մարգարէք եւ առաքեալք եւ զինչ ընտրեալ սուրբք Աստուծով՝
Զայն քարով քարկոծեցին, եւ կիսեցին զոմանք սրրով,
Եւ չինաց մարդ ի յերկրի՝ որ ինք կացել էր հրամանով[1]։
Բովանդակ աշխարհս է գայլ, եւ միարան կան մի ժողով,
Նայ գառին ուր կայ հանգիստ մէջ գալենուն ինք կենալով.
Ով խելոք է եւ ուզէ զինք կենդանի սրտի կամով՝
Թող լինի ի յաշխարհէս ինք անծանօթ հրաժարելով։
Ով փառք ինքն երեւի յաչքս մարդկան մեծ պատըւով,
Եւ սիրէ փարթամութիւն եւ ընդունի զինք գովելով,
Երբ լըսէ նախատանաց բանք յօտարաց վասն իր տալով՝
Նայ խոցի հանց մահուան որ չբժըշկի այլ նա դեղով.
Իսկ որ սուրբ է, անարատ, եւ յերեսաց չէ ինք գործով՝
Թէ գովեն զինք՝ ոչ խնդայ կամ տրտմի բամբասելով.
Թէ աղքատ իր հանդիպի կամ թագաւոր ոսկի թաճով՝
Հաւասար մէկ տեսանէ նման միմեանց ոչ զատելով։

1 Օրինապահ մարդ չինաց։

Է՛ անմիտ, երբ դու չունիս քեզիկ բաժին երբ հազըրով[1],
Եւ չըկայ առ քեզ գանձի տեղ կամ քսակ երկու փողով,
Դու հնազանդ էր չկենաս իմաստնոց՝ քիչ խօսելով,
Որ յամեն պահ չերեւիս մերկ ու դատարկ եւ ամօթով.
Երբ չունիս խալաս[2] ոսկի, զի ես պղինձ օծած ոսկւով,
Դու ընդէր մօտ ի մահաքն[3] յայտնի լինիս պարզ երեսով.
Եւ զայլոց խալաս ոսկի՝ որ փորձած է հազար հըրով՝
Կամենաս գալպի[4] զուգել զայն՝ որ ընտրած էր մահաքով։ —
Լաւ է ինձ մէջ գազանաց մարդակերաց բընակելով,
Քանց անմիտ մարդ և անիմաստ որ յիս խօսի անդէտ բանով
Անդիտին միտքն է տըկար եւ չունի զ . . . . . . ով[5],
Կամ թէ մի պահ համբերէ երկու խօսից միտ դնելով։
Կոստանդին, էր կաս ազար[6] և ի սիրտ ենես թէզ մը չտապով.
Վասն անդէտ և անմիտ ոմանց՝ զմեզ էր տանջես շատ ցընորով.
Ոչ կարես հաւան պահել դու զամեն մարդ հետ քեզ սիրով[7],
Թէ կամիս հանգիստ կենալ, որ չըմաշես դու զքեզ հոգով,
Մի փառաց դու հետեւիլ, մի անգանիլ անեզր ի ծով.
Զի ծովուն ոչ կայ հանգիստ, յերակ ծըփի յալիս քամով.
Ի ով հողոյն բաժին լինի՝ այլ չհաստատի ինք կենալով։

ԿՈՍՏԱՆԴԻՆ ԵՐԶՆԿԱՑԻ

1 Հազըր, պատրաստ (տաճկ)։
2 Խալիս, անխառն, մաքուր։
3 Փորձաքար։
4 Գալպ, սուտ (տաճկ)։
5 Աւրըւած էր օրինակը։
6 Նեղացած, տրտմած։
7 Տող մը կը պակսի հոս։

Դգալ և Պատառաքաղ.

Մեր նախնեաց պատուոյն համար պէտք է կարծել որ դգալին և պատառաքաղին ծագումը ժամանակաց գիշերուանը մէջ կը կորսուի։ Արժան էր որ մաքրութիւնը ծնանի մարդուս հետ. բայց այնպէս չեղաւ։

Եթէ դիմենք պատմութեան կը տեսնանք որ մարդիկ շատ ուշ ունեցած են մաքրութեան խնդիրներուն վերաբերեալ յստակ գաղափարները. նոյն իսկ մեր օրերը կ՚երեւայ որ այս խնդրոյս մէջ կան շատեր որոնց լուծումը դեռ խիստ անկատար է։

Այսպէս է զոր օրինակ դգալներուն և պատառաքաղներուն մեծ խնդիրը։

Կարդանք պատմութիւնը։

Նկատմամբ դգալին՝ վաւերական վըկայութիւնները կը պակսին։ — Այն կէս պինդ կէս ջրի կերակրոյն սովորութիւնն որ թան կամ ապուր կ՚ըսուի թէ արդեօք հնոց ծանօթ էր՝ անկարելի է հաստատելը։

Սպարտացիք կ՚ապրէին սեւ ուտելիքով մը որ աւելի պինդ քան թէ ջրի էր, մեծ և արիւնէ զանգուած ու հա-